

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**  
**SCIENTIFIC LIFE**



**INTERNATIONAL CONFERENCE  
“PROBLEMS OF THE HISTORY OF THE CAUCASUS” DEDICATED TO  
THE 75TH ANNIVERSARY OF PAVEL CHOBANYAN (1948-2017)**

*Monika Mirzoyan*

**Keywords:** International Conference, Pavel Chobanyan, Caucasian Studies, Armenian Studies, Institute of Oriental Studies of NAS RA.

The International Conference “Problems of the History of the Caucasus” was held at the National Academy of Sciences of RA in Yerevan on March 15-16.

Pavlik (Pavel) Chobanyan was born in Khanlar town of Azerbaijan SSR (native village - historical Pip-Zaglik) on March 15, 1948. In 1973, he graduated from the Department of History at Yerevan State University. From 1974-1976, he pursued Caucasian and Georgian studies at the postgraduate course of the Institute of Oriental Studies of Armenian Soviet Republic Academy of Sciences and in the Institute of Manuscripts of the Georgian Academy of Sciences under the supervision of of Georgian scholar P. Metreveli.

P. Chobanyan began his scholarly career at the Institute of Oriental Studies. From 1977-1985, he was a junior researcher at the Department of Caucasian and Byzantine Studies of the institute; in 1995-1996, he was the head of the "Christian East" department. From 1985-1995, P. Chobanyan worked as a senior researcher at the Institute of History of NAS RA. For more than ten years, from 2002 to 2013, he served as deputy director of research at the Institute of Oriental Studies. For many years, from 1999-2003, he was a member of some scientific and editorial boards. He served as the Deputy Editor-in-Chief of the “Historical-philological journal” of NAS RA. In 2007, Chobanyan worked as a senior fellow analyst at the National Research Institute for Strategic Studies of the Ministry of Defense of the Republic of Armenia (National Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia).

P. Chobanyan is the author of more than 150 scientific publications. He is also the editor of two dozen scientific articles. His works are related to the study of Armenian history, Armenian-Georgian, Armenian-Russian relations, and Georgian correspondence. He authored the fundamental monographs “Georgian travelers and their information about Armenians” [3] and “Armenian-Russian-Georgian Relations in the Second Half of VII Century” [2]. The scholar Kh. A. also published a translation of the “Grammar of the Old Georgian Language” by Shanidze together with Hayrapet Margaryan. In 1990, P. Chobanyan published a collection of documents entitled “Armenian-Russian relations in the second half of the 18th century (1760-1800)”, and in 1999 Makar Barkhudaryan's “The Country of Aghvank and

their neighbors” and “Artsakh” were republished with the author’s preface and annotations [1: 222-235].

P. Chobanyan also carried out teaching activities at various universities. He conducted general and professional courses at David Anghat University, Pedagogical University after Kh. Abovyan, Yerevan State University, and Yerevan Mkhitarayan Congregation’s school.

The scholar also participated in many international conferences, made presentations World Congresses of Oriental Studies at the 35th (Budapest) and 37th (Moscow), and participated in an international conference organized on the initiative of the Mekhitarist Congregation of Vienna to mark the 200th anniversary of the Mekhitarist Congregation of Vienna [4: 1-4].

Pavel Chobanyan was awarded the Garegin Nzhdeh Medal by the RA Ministry of Defense in 2010. He received other medals, including "150 years since the birth of K. Mechiev" (2010) and “20 years since the declaration of the Nagorno-Karabakh Republic” (2011).

The first day of the conference began in the round hall of the Presidium of NAS RA, and the second day continued in the conference hall of the Institute of Oriental Studies of NAS RA.

The conference was jointly organized by the Institute of Oriental Studies and Institute of History of the National Academy of Sciences of NAS RA and the Department of History of the Yerevan State University.

Academician-Secretary of the Division of Armenian studies and Social Sciences of NAS RA Yuri Suvaryan gave an opening speech of the conference. Director of the Institute of Oriental Studies of NAS RA Robert Ghazaryan and director of the Institute of History of NAS RA Ashot Melkonyan made welcoming remarks. Edik Minasyan, Dean of the YSU Faculty of History, welcomed the conference participants as well. The conference was also attended by members of Pavel Chobanyan’s family who made welcoming remarks.

In his speech, Director of the Institute of Oriental Studies of NAS RA Robert Ghazaryan stated that he considers it a problem that most of our society does not have a clear idea of the state called "Azerbaijan" and who “Azerbaijanis” are, when and how they created the state, such as it is today. According to R. Ghazaryan, it is necessary to educate and inform the public at the state, university, why not also at the school level. Naturally, it is not about instilling hatred, as is done in Azerbaijan, but simply about showing the true course of history. “Azerbaijan's first target is the Armenians because anti-Armenianism is one of the cornerstones of their state. Not much has changed since 1918, but on the other hand, their “theft” extends to other countries in the region. They are also appropriating the historical and cultural heritage of the Iranian, Georgian, and Caucasian peoples and local populations” [5].

Thirty-one participants spoke at the conference, including thirteen from abroad (Georgia, Russia, the United States, Iran, and China). Eight participants from Georgia (Ivane Javakhishvili Tbilisi State University, Institute of History and Ethnography, Georgian National Center of Manuscripts, Institute of Oriental Stud-

ies) presented the results of their research on various issues of Armenian-Georgian relations and Caucasian history during the conference. Remarkable reports were made on various topics of Armenian and Georgian history of the early Middle Ages to the Modern Age, and the ethnopolitical and socio-economic history of the Eastern Caucasus.

Mariam Chkhartishvili, one of the Georgian participants, presented the paper "Identification of Nobleman Atrnerseh of the "Book of Letters" and "Revisiting Political History of Georgia in 6th-7th Centuries", David Merkviladze's paper was "The Plans of Erekle II, the King of Kartli-Kakheti as regards the campaign of Russian troops in Daghestan in 1775", and Manuchar Guntsadze presented "Socio-economic Issue in the Democratic Republic of Georgia (1918-1921)". Jilbert Meshkanbarians with a paper called "The Safavid Iran's Taxation Process According to 16<sup>th</sup>-18<sup>th</sup> centuries Armenian Historians and Other Sources of the Period" represented Iran. Among the Armenian participants, Azat Bozoyan, Doctor of Historical Sciences, presented a remarkable paper entitled "Research on the problems of the history of the Caucasus in Pavlik Chobanyan's works" and Benyamin Mailyan presented a paper called "The Adjarian question in Georgian-Turkish-Azerbaijani relations (1918-1921)". There were other interesting papers on the early Middle Ages, modern history of Armenia and Georgia, and the ethnopolitical and socio-economic history of the Eastern Caucasus [6].

One of the sessions was held online, with the participation of Prof. Sepuh Aslanian (Chair of the Department of Armenian Studies of Los Angeles, USA), S. Lusineh Gushchyan (Russian Museum in St. Petersburg), Gilbert Meshkanbarians from Iran, and Mariam Bezhitashvili (Georgia).

The conference papers were printed in advance and distributed to the conference participants.

The conference has been organized within the framework of the thematic program "21T-6A163 Science Committee of Ministry of Education, Science, Culture and Sport of Armenia".

## **BIBLIOGRAPHY**

1. Bozoyan A., In memory of Pavel Chobanyan., P. A. Bibliography of Chobanyan's scientific works, "Bulletin of Armenian Studies", 2017, pp. 222-235., (Pavel Čobanyani hišatakin. P.A.Čobanyani gitakan ašxatowtjownneri matenagitowtjown) (in Armenian).
2. Chobanyan P., Armenian - Russian - Georgian Relations on the Second half of XVIII Century, Mother See of Holy Etchmiadzin, 2006, 560 p. (Hay-rows-vračakan haraberowtjownnerë XVIII dari erkrord kesin, Mayr Atoř Sowrb Eĵmiaçin) (in Armenian).
3. Chobanyan P., The travel notes of Georgian authors and their accounts of the Armenians, Yerevan, HSSR, 1981, Academy of Sciences, 199p. <https://arar.sci.am/dlibra/publication/190573/edition/173083/content> (09.07.2023)

- (Chobanyan P., Vracakan owğegrowthyownerë ew nranc' teğekowtyownerë hayeri masin) (in Armenian).
4. Kostandyan E., An International scientific conference dedicated to the 200th anniversary of the Mkhitarian Congregation of Vienna, Lratu, 2019, pp. 1-4, (Kostandyan E., Miğazgayin gitağogov' nvirvaç Viennayi Mxitarian miabanowtyan 200-amyakin) (in Armenian).
  5. Mkhitarian L., Pavel Chobanyan fought with his pen against the manipulations of Armenian history, "Hayastani Hanrapetutyun", <https://hhpress.am/socium/2023/18082/>, 2023. (Mkhitarian L., Pavel Čobanyann ir grčov paykarowm ēr Hayastani patmowtyan nengapoxowmri dem) (in Armenian).
  6. "Problems of the history of the Caucasus". Dedicated to the 75th Anniversary of Prof. Pavel Chobanyan (1948-2017), Proceedings of the International Scientific conference, Yerevan, NAS RA, 15-16 March, 2023, (Kovkasi patmowtyan himnaharc'ërë, Miğazgayin gitağogovi Nyowter) (in Armenian).

**Monika Mirzoyan**

Institute of Oriental Studies of NAS RA  
[monika.mirzoyan7@gmail.com](mailto:monika.mirzoyan7@gmail.com)

**ORCID: 0000-0002-8053-7152**

**«ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ Պ. ՉՈՔԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75 ԱՄՅԱԿԻՆ**

*Մոնիկա Միրզոյան*

**Բանալի բառեր՝** միջազգային գիտաժողով, Պավել Չոբանյան, կովկասագիտություն, հայագիտություն, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ:

2023 թ. մարտի 15-16-ին Երևանում՝ ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Կովկասի պատմության հիմնահարցեր» միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր հայագետ-կովկասագետ Պ. Չոբանյանի ծննդյան 75 ամյակին:

Պավլիկ (Պավել) Չոբանյանը ծնվել է 1948 թ. մարտի 15-ին Ադրբեջանական ԽՍՀ Խանլար քաղաքում (հայրենի գյուղը՝ պատմական Փիփ-Չազլիկ): 1973 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1974-1976 թթ. կովկասագիտություն-վրացագիտություն մասնագիտացմամբ ուսանել է ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունը իրականացնելով Վրացական ԽՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտում՝ ակադեմիկոս Ե. Պ. Մետրևելու ղեկավարությամբ:

Պ. Չոբանյանը գիտական գործունեությունը սկսել է Արևելագիտության ինստիտուտում: 1977-1985 թթ. եղել է այդ Ինստիտուտի Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, 1995-1996 թթ.՝ «Քրիստոնյա Արևելք» բաժնի վարիչ: Տասը տարուց ավելի՝ 2002 թ. մինչև 2013 թ.,

գրադեցրել է Արևելագիտության ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը: 1985-1995 թթ. Պ. Չոբանյանը աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Երկար տարիներ եղել է մի շարք գիտական և խմբագրական խորհուրդների անդամ, 1999-2003 թթ. գրադեցրել է ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդեսի խմբագրի տեղակալի պաշտոնը: 2007 թ. որպես ավագ գիտնական-վերլուծաբան՝ Պ. Չոբանյանը աշխատել է ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան):

Գիտնականը հեղինակել է 150-ից ավելի գիտական հրապարակումներ: Նա նաև երկու տասնյակ գիտական աշխատությունների խմբագիր է: Պ. Չոբանյանի աշխատությունները վերաբերում են հայոց պատմության, հայ-վրացական, հայ-ռուսական հարաբերությունների, վրացական ուղեգրությունների ուսումնասիրությանը: Նրա գրչին են պատկանում «Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին» և «Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին» հիմնարար մենագրությունները: Գիտնականը Հ. Մարգարյանի հետ համատեղ հրատարակել է նաև Ա. Շանիձեի հեղինակած «Հին վրացերեն լեզվի քերականություն» աշխատության թարգմանությունը: 1990 թ. լույս է տեսել Պ. Չոբանյանի մասնակցությամբ կազմված «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին (1760-1800 թթ.)» փաստաթղթերի ժողովածուն, իսկ 1999 թ. գիտնականի աշխատասիրությամբ և առաջաբանով վերահրատարակվել են Մակար Բարխուդարյանցի «Աղվանից երկիր և դրացիք» ու «Արցախ» տեղագրական աշխատությունները:

Պ. Չոբանյանը ծավալել է նաև մանկավարժական գործունեություն տարբեր համալսարաններում: Ընդհանուր ու մասնագիտական դասընթացներ է վարել Դավիթ Անհաղթ համալսարանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Մխիթարյան միաբանության Երևանի վարժարանում:

Գիտնականը մասնակցել է նաև միջազգային բազմաթիվ գիտաժողովների, զեկուցումներով հանդես է եկել Արևելագետների 35-րդ (Բուդապեշտ) և 37-րդ (Մոսկվա) համաշխարհային կոնգրեսներում, մասնակցել Վիեննայի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ կազմակերպած միջազգային գիտաժողովին՝ նվիրված Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակին:

Պ. Չոբանյանը պարգևատրվել է ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» մեդալով (2010 թ), ՌԴ «150 лет со дня рождения К. Мечиева» (2010 թ), «20 лет провозглашения Нагорно-Карабахской Республики» (2011 թ) հուշամեդալներով:

Գիտաժողովի առաջին օրվա աշխատանքները մեկնարկեցին ՀՀ ԳԱԱ Նախագահության շենքի կլոր նիստերի դահլիճում, իսկ երկրորդ օրվա աշխատանքները շարունակվեցին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճում:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության և պատմության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետների համատեղ ջանքերով:

Գիտաժողովի բացմանը ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը: Գիտաժողովին ներկա էին և ողջույնի խոսքով հանդես եկան նաև Պավել Չոբանյանի ընտանիքի անդամները:

Իր խոսքում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը նշեց, որ խնդիր է համարում այն, որ մեր հասարակության զգալի մասը հստակ պատկերացում չունի «Ադրբեջան» կոչվող պետության և «ադրբեջանցու» մասին, թե ովքեր են, երբ և ինչպես են պետություն ստեղծել, ինչպիսին է այդ պետությունն այսօր: Ռ. Ղազարյանի կարծիքով՝ հարկավոր է պետական, բուհական, ինչու չէ, նաև դպրոցական մակարդակով կրթել, տեղեկացնել հանրությանը: Խոսքը, բնականաբար, ատելության սերմանման մասին չէ, ինչն արվում է Ադրբեջանում, այլ ուղղակի պատմության ճշմարտացի ընթացքը ներկայացնելու. «Ադրբեջանի թիրախում առաջին հերթին հայերն են, որովհետև իրենց պետության հիմնաքարերից մեկը հենց հակահայկականությունն է. 1918 թվականից սկսած և մինչ օրս շատ բան չի փոխվել, բայց մյուս կողմից նրանց «գողությունը» տարածվում է տարածաշրջանի մյուս երկրների վրա: Նրանք յուրացնում են նաև իրանական, վրացական, կովկասյան ժողովուրդների, տեղաբնիկների պատմամշակութային ժառանգությունը»:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան 31 մասնակից, որոնցից 13-ը՝ արտերկրից (Վրաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Իրան, Չինաստան): Գիտաժողովի առկա նիստերի ընթացքում հայ-վրացական հարաբերությունների, Կովկասի պատմության տարաբնույթ հարցերի շուրջ իրենց հետազոտությունների արդյունքները ներկայացրեցին Վրաստանից ժամանած ութ մասնակիցները (Իվանե Զավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան, Պատմության և ազգագրության ինստիտուտ, Ձեռագրերի ազգային կենտրոն, Արևելագիտության ինստիտուտ): Լսեցին ուշագրավ զեկուցումներ Հայաստանի և Վրաստանի պատմության վաղ միջնադարի, նորագույն շրջանի, Արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության զանազան խնդիրների թեմաների վերաբերյալ:

Վրաստանի մասնակիցներից Մարիամ Չխարթիշվիլին հանդես եկավ «Իշխան Ատրնեբսեհի նույնականացումը «Նամակների գրքում» և VI-VII դարերի Վրաստանի քաղաքական պատմության վերանայումը» զեկույցով, Դավիդ Մերկվիլաձեն՝ «Քարթլի-Կախեթի թագավոր Հերակլ Բ-ի ծրագրերը ռուսական գործերի դեպի Դաղստան կատարած 1775 թ. արշավանքի կապակցությամբ»,



Մանուչար Գունցաճեն՝ «Սոցիալ-տնտեսական խնդիրը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունում (1918-1921)» թեմաներով: Իրանից մասնակցում էր պ.գ.թ. Ժիլբերթ Մեշքանբարյանսը, ով ներկայացրեց «Սեֆյան Իրանի հարկահանման գործընթացը համաձայն XVI-XVIII դարերի հայ պատմագիրների աշխատությունների և ժամանակաշրջանի այլ սկզբնաղբյուրների» թեման: Հայաստանյան մասնակիցներից պ.գ.դ. Ազատ Բոզոյանը ներկայացրեց «Այսրկովկասի պատմության խնդիրների հետազոտությունը Պավլիկ Չոբանյանի աշխատություններում» ուշագրավ զեկույցը, իսկ պ.գ.թ. Բենիամին Մաիլյանը իր զեկույցում անդրադարձավ «Աջարական հարցը վրաց-թուրք-ադրբեջանական հարաբերություններում (1918-1921 թթ) թեմային: Եղան այլ հետաքրքրական զեկույցումներ Հայաստանի և Վրաստանի պատմության վաղ միջնադարի, նորագույն շրջանի, Արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության զանազան խնդիրների թեմաներով:

Նիստերից մեկը տեղի ունեցավ համացանցային զուս հարթակի միջոցով, որին մասնակցեցին ԱՄՆ Լոս Անջելեսի Հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Սեպուհ Ալանյանը, Ռուսաստանի Դաշնությունից Ս. Պետերբուրգի Ռուսական թանգարանի աշխատակից Լուսինե Ղուչյանը, Իրանից Ժիլբերտ Մեշքանբարյանսը և Վրաստանից Մարիամ Բեժիտաշվիլին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի երաշխավորությամբ նախապես տպագրվել և գիտաժողովի մասնակիցներին էր տրամադրվել գիտաժողովի զեկույցումների նյութերի ժողովածուն:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի «21T-6A163» թեմատիկ ծրագրի շրջանակներում: